Սայաթ Նովա

Խուսան սընբուլ դաստամազըդ

Սուսան սընբուլ դաստամազըդ էրեսիդ խափանգ իս արի,
Կավիրըդ օլոր տար ու բիր, արայիշ գուլ հանգ իս արի:

Հանգ իս արի, յա՛ր, ա՛ յար,
Սիրտըս արիր յարա, յա՛ր,
Գըլուխըս մատաղ կոնիմ՝
Ղաբուլ անիս, յա՛ր, ա յար:

Ումբրիս լարը ձըգիլ դադանգ իս արի,
Վայ թե կըտըրվիլ է դափիլ, յա՛ր ա՛ յա՛ր:

Աճկիրըդ ծով, էրեսըդ շովդ, էշխըս լուլ կուտա անղայիդ,
Անքանար ջուրըն իս գըցի, բոլորքըս տալղա, ջըրհիդիդ:

Ջըրհիդիդեն Նոյ այիբ,
Վուր փըրկըվից նու այիբ,
Նոյին գեմին ազատից,
Ինձ՝ այիբն ու նու այիբ:

Մե-մեկ ինձի տիսուդ թե՝ անիս լաիդ,
Կու կենամ ջամալիդ մայիլ, յա՛ր, ա՛ յար:

Հասրաթեդ չոլիրը նընգած, Մեջլումի պես Լեյլու զայաթ.

Յարալու ջեյրան իս դառի, յիս քու էդնեդ՝ ավչի-սայադ:

Սայաթ Նովեն իմ, սայադ.
Անումըս հաշվիր՝ սայ-ադ.
Տիսուդ կարոտ չը թողնիս,
Չասիս՝ սա օտար, սա՝ յադ:

Կամ թե՝ գուրձավուր իմ, բեքարա խայաթ,
Արածըդ ինձ չի լի վայիլ, յա՛ր, ա՛ յա՜ր: